ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
7- րդ ԴԱՍԱՐԱՆ

ՓՈՐՁԱԳԵՏ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2021 Թ

Ուսումնական նյութեր

Թեմա 1.Մարդ-բնություն

Թեմայի նպատակը

Սովորողները կհասկանան բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը, օրինակների միջոցով կներկայացնեն բնության և հասարակության փոխկախվածությունը:

Դաս 1. Մարդ-բնություն

Օ, բնություն, օ՜ մայր-մշտահոլով, մշտագո և մշտատև,-
Դո՛ւ, որ փոխվում ես հար, բայց մնում ես –կաս բազմաձև…
Եղիշե Չարենց

Մեզ հիացմունք են պատճառում երկնքի աստղերը, բարձր լեռները, հարթավայրերը, օվկիանոսները, գետերը և այլն: Զարմանալի է նաև բույսերի և կենդանիների աշխարհը: Բայց երկրագնդի վրա ամենայուրահատուկ և ամենահետաքրքիր կենդանի էակը մարդն է:

Մարդը բնության զավակն է և, հետևապես, չի կարող գոյատևել առանց բնական միջավայրի: Իսկ ի՞նչ է բնությունը:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ **բնությունն** այն միջավայրն է, որտեղ գոյատևում են մարդը, գոյություն ունեցող ամեն ինչը, ողջ աշխարհն իր բազմազան ձևերով: Բնության գաղափարը շատ լայն է. բնություն են և՛ հեռավոր աստղերը, և՛ աչքով անտեսանելի ատոմներն ու մոլեկուլները, և՛ հսկա փղերն ու կետերը, և՛

ամենափոքրիկ հողաթափիկ ինֆուզորիաները, բնություն են անսահման օվկիանոսները, անտառներն ու գետերը: Բնություն է Երկրի վրա եղած կենսաբազմազանությունը, բնություն է տիեզերքն իր ամբողջության մեջ: Բնությունը բազմազան է, անհնար է որևէ ձեռնարկի մեջ թվարկել նրա բոլոր ձևերը՝ սկսած անկենդան բնությունից, վերջացրած բուսական ու կենդանական աշխարհով: Բայց մյուս կողմից բնությունը միասնական է, ուստի այն հնարավոր է արտահայտել մեկ բառով՝ բնություն:

Մարդը, սակայն, ինչպես արդեն գիտեք, նաև հասարակական էակ է: Իսկ սա նշանակում է, որ նա չի կարող գոյատևել միայն բնական միջավայրում, ուստի ստեղծում է նաև հասարակական միջավայր: Պատմականորեն ծնվելով որպես բնության զավակ, մարդն աստիճանաբար դարերի ընթացքում ստեղծում է կացարաններ, գործիքներ, ճանապարհներ, ի վերջո, մեծ քաղաքներ, որոնք արհեստական են, ձեռակերտ: Իմաստասերներն ասում են, որ ներկայումս մարդն ապրում է երկրորդ բնության մեջ: Այդ երկրորդ բնությունը մարդու կողմից ստեղծված արհեստական միջավայրն է (օրինակ՝ արհեստական ջրամբարները, երկաթուղիները, հսկա գործարանները, օդանավակայանները, ռազմական կայանները, ի վերջո, քաղաքները, մյուս բնակավայրերը և այլն), որը փոխում է բնության նախաստեղծ ներդաշնակությունը: Մարդը, ինչպես և մնացած կենդանի արարածները, բնական էակ է, որն ունի բնության օրենքներին համապատասխան, այսինքն՝ բնական ճանապարհով ձևավորված ու զարգացող մարմին և բնական պահանջմունքներ՝ քաղցն ու ծարավը հագեցնելը, ցրտից ու շոգից պաշտպանվելը, սերունդ ունենալը և այլն: Այ դու հանդերձ, մարդը կենսաբանորեն ավելի զարգացած է, քան մնացած կենդանիները: Խոսքը, իհարկե, առանձին կարողությունների մասին չէ՝ լսողություն, տեսողություն, հոտառություն, որոնցով կենդանական աշխարհի շատ ներկայացուցիչներ գերազան ցում է մարդուն, այլ նրա կարողությունների ամբողջություն և մանավանդ մտավոր կա րողությունը: Եվ երկրորդը, որ պակաս կարևոր չէ. մարդը կենդանական աշխար հի այլ ներկայացուցիչներից տարբերվում է իր բնական պահանջմունքները բավարարելու

եղանակով, ձևով. ի տարբերություն կենդանիների, որոնք բնությունից օգտվում և բնության վրա ներգործում են անմիջականորեն, մարդն այդ նպատակով ստեղծում է զանազան գործիքներ ու սարքավորումներ, որոնք շարունակ կատարելագործում է: Դրան նպաստող գործոնները մի քանիսն են: Գլխավորը թերևս այն է, ինչը կարելի է ձևակերպել որպես մարդու կարևոր հատկանիշ:

Դաս 2- 3. Մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիան

Իրավամբ, եթե մենք «հրաշք» ենք անվանում բնության վրա
մարդու ունեցած իշխանությունը, պետք է ընդունենք, որ այդ
«հրաշքն» ավելի շատ արտահայտվում է աղետների ձևով…
Ֆրենսիս Բեկոն

Հարաբերությունների ներդաշնակությունը բավարարվածության զգացում է բերում մարդուն: Սակայն մարդու կողմից ստեղծված հասարակական միջավայրը միշտ չէ, որ ներդաշնակում է բնական միջավայրին: Հասարակություն-բնություն հարաբերություններում մտածողները տարբերակում են չորս դարաշրջան:

Բնության գերակայության դարաշրջան:

Սա մարդկության պատ- մության արշալույսն է, երբ մարդն ամբողջովին ապրում էր բնության աշխարհում և այն աստվածացնում էր:

Մարդը լիակատար կախվածության մեջ է բնական տարերային ուժերից և շնչավորում է ողջ բնությունը:

Մարդկությունն իր առաջացման հենց սկզբից ազդել է շրջակա բնական միջավայրի վրա և փոխել այն: Հայկական լեռնաշխարհը մարդկային քաղաքակրթության ծագման օջախներից է: Մարդու արտադրական գործունեության մի շարք բնագավառներ Հայկական լեռնաշխարհում ունեն պատմական խոր արմատներ: Շրջակա բնական

միջավայրին բնորոշ միլիոնավոր տարիների ընթացքում ձևավորված բնական կայուն հավասարակշռությունը այդ դարերից սկսել է խախտվել:

Առանձնացվում է բնօգտագործման հետևյալ հիմնական փուլերը՝ նախնադարյան, ստրկատիրական, միջնադարի ֆեոդալական, կապիտալիստական փոխհարաբերությունների փուլեր:

Մարդը, մաս կազմելով բնական էկոհամակարգին, օգտվում է նրա ռեսուրսներից՝ օդից ջրից հողից, կենդանական ու բուսական աշխարհից ու իր կյանքի ու գործունեության ընթացքում ներգործում է այդ էկոհամակարգի վրա իր թափոններով, մթնոլորտ արտանետումներով ու կեղտաջրերի արտահոսքերով: Բնականաբար, այդ ընթացքում նա ընկալում է բնությունը որպես իրեն շրջապատող միջավայր, որից նա օգտվում է ու որի վրա ներգործում: Եթե այդ երկուսը՝ օգտվելն ու ներգործելը չեն գերազանցում որոշակի սահմանը, բնական էկոհամակարգն իր ներքին բնական կարողությունների շնորհիվ կարողանում է վերականգնել իր բնական հավասարակշռությունը և նյութերի այդ շրջապտույտը շարունակվում է: Այն պահից, երբ մարդն իր սնունդը ապահովելու համար որսորդությունից անցավ անասնապահության, իսկ բուսերի հավակչությունից հողագործության (*Հայկական լեռնաշխարհում՝ մ.թ.ա 11-րդ հազարամյակում, անմիջապես գլոբալ հայտնի աղետից հետո, որի հետևանքով ավարտվեց վերջին՝ Վյուրմյան սառցապատման ժամանակաշրջանը*), սկիզբ առավ մարդածին (անթրոպոգեն) միջավայրի ձևավորումը: Այդ ընթացքում մարդածին միջավայրը անընդհատ ընդարձակվելով, գրավում էր բնական լանդշաֆտների նոր տարածքներ, ընդգրկելով բնական միջավայրի գործնականում բոլոր բաղադրիչները՝ հողաշերտը, ջրային տարածքները, ընդերքը, կենսոլորտը:

Մինչ այն պահը, երբ բնությունն իր ներքին ինքնավերականգնողական կարողությամբ կարողանում էր քիչ թե շատ դիմակայել մարդածին միջավայրի գրոհին, «մարդ-բնություն» հարաբերությունների բացասական դրսևորումները մարդու համար անտեսանելի էին: Նույնիսկ ոչ վաղ անցյալում, մինչ 20-րդ դարի կեսերը մարդկանց գիտակցության մեջ տիրում ու խրախուսվում էր «բնության նվաճման» կարգախոսը:

Հաշվի առնելով, որ մարդու ներգործությունը բնության վրա կտրուկ ավելանում է բոլոր հնարավոր բնագավառներում, և այդ ներգործությունը գերազանցապես բացասական է, բնության ներքին էներգիաները ենթարկվում են վնասակար փոփոխությունների:

Հարկավոր է կենտրոնում դնել բնությունը և նրա շուրջ համախմբել մնացյալ բոլոր խնդիրները՝ սոցիալական,տնտեսական,քաղաքական:

Մարդ-բնություն առողջ էկոհամակարգ ստեղծելու համար անհրաժեշտ է միավորվել բնության շուրջ, պաշտպանել և պահպանել այն: Մարդկության տեխնիկական առաջընթացն ուժեղացնում է բնության վրա հասարակության ազդեցությունը: Մարդկության հետագա զարգացման համար պետք է անցում կատարել բնության և մարդու միջև փոխհարաբերությունների ավելի արդյունավետ և ներդաշնակ ուղիների:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս է մարդը կապված բնության հետ:
2. Ինչպե՞ս է փոխվել մարդ-բնություն կապը պատմության ընթացքում:
3. Ինչո՞ւ է կարևոր բնության պահպանությունը մարդու առողջության համար:
4. Որո՞նք են բնության հետ ներդաշնակ լինելու կանոնները: Ի՞նչ պետք է անի մարդը, որպեսզի կարողանա ներդաշնակ լինել բնության հետ:

Գործնական աշխատանք

- Անցկացնել զրույց «Մարդու դրական և բացասական ազդեցությունը բնության վրա» թեմայով: Զրույցների արդյունքների հիման վրա պատրաստել հակիրճ հաղորդում:
- Առանձնացնել համայնքային մեկ բնապահպանական խնդիր և հիմնավորել մարդու ազդեցությունն այդ խնդրի ծագման վրա:
- Պատրաստել բնության պահպանությանը վերաբերող ցուցապաստառներ:

Թեմա 2. Մարդ-ընտանիք-համայնք-հասարակություն

Թեմայի նպատակը

Սովորողները կգիտակցեն մարդու և հասարակության փոխկապվածությունը, հասարակական մեծ և փոքր խմբերի ու շերտերի նմանություններն ու տարբերությունները:

Դաս 3.Հասարակական կյանքի առանձնահատկությունները:

Հասարակական հարաբերություններ, բազմապիսի կապեր, որոնք առաջանում են սոցիալական խմբերի, դասակարգերի, ազգերի միջև ու դրանց ներսում՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային կյանքի և գործունեության պրոցեսում: Բաժանվում են առաջնային (նյութական) և երկրորդային (գաղափարական) հարաբերությունների: Նյութական (տնտեսական, արտադրական) հասարակական հարաբերությունները մարդկանց կամքից և գիտակցությունից անկախ, օբյեկտիվ անհրաժեշտությամբ գոյացող, նյութական բարիքների արտադրությանն ուղղված գործունեության հետևանք են: Գաղափարական (քաղաքական, իրավական, բարոյական և այլն) հասարակական հարաբերություններն առաջանում են նյութական հասարակական հարաբերությունների բազայի վրա և վերջինի վերնաշենքն են: Անհատները հասարակական հարաբերություններում հանդես են գալիս որպես սոցիալական որևէ հանրության, խմբի անդամ, ներկայացուցիչ: Հասարակական հարաբերությունները դիալեկտիկական փոխազդեցության մեջ են մարդկանց անձնական հարաբերությունների հետ և որոշում են այդ հարաբերությունների էական կողմերը: Սոցիալական տարբեր խմբերի, հանրությունների, կազմակերպությունների հասարակական հարաբերությունները որոշվում են արտադրական

հարաբերությունների պատմականորեն որոշակի համակարգում ունեցած նրանց տեղով, սոցիալական այլ խմբերի հետ ունեցած փոխհարաբերություններով:

Դաս 4.Հասարակության սոցիալական կազմը: Խմբեր, շերտեր, համայնքներ:

Խմբեր, շերտեր, համայնքներ

Մարդը, ինչպես հայտնի է, հասարակական էակ է: Հասարակության մեջ են ձևավորվում նրա պահանջմունքները և դրանց բավարարելուն ուղղված հմտություններն ու կարողությունները: Հասարակություն ասվածը վերացական հասկացություն չէ: Մեզնից յուրաքանչյուրը, լինելով ընդհանրապես մարդկային հասարակության անդամ, միաժամանակ որևէ ընտանիքի, համայնքի, ազգի ներկայացուցիչ է: Այսպիսով՝ արդեն ծննդյան օրից սկսած՝ մենք այս կամ այն խմբի անդամ ենք: Այդ խմբերը շատ են և տարբեր:

Հասարակական խմբեր

Հասարակությունը կազմված է բազմաթիվ մեծ ու փոքր խմբերից: Դրանց մի մասն առաջանում է ինքնաբերաբար, այսինքն՝ խմբի անդամների նախաձեռնությամբ, ինչպես, օրինակ՝ ընտանիքը: Ոմանք ստեղծվում են պետական մարմինների որոշմամբ, օրինակ՝ բանակը: Կան խմբեր, որոնք կայուն են ու գոյություն ունեն երկար ժամանակ, և խմբեր, որոնք ավելի կարճատև են:

Փորձենք առանձնացնել այն խմբերը, որոնք մենք ենք ընտրել, և այն, որոնցում կանք մեր կամքից անկախ:

Գործնական աշխատանք

Աշխատանքային տետրում լրացրե՛ք աղյուսակը:

Խմբեր, որոնցում կանք մեր կամքից անկախ	Խմբեր, որոնք մենք ենք ընտրել

Առաջին սյունակում կարող են լինել հետևյալ խմբերը.

- *աղջիկներ, տղաներ,*
- *գյուղաբնակներ, քաղաքաբնակներ,*
- *զինակոչիկներ, քաղաքացիական անձինք,*
- *հայեր, հույներ, հնդիկներ,*
- *Հայաստանի, Վրաստանի, Լեհաստանի և այլ պետությունների քաղաքացիներ*:

Երկրորդ սյունակում կարող են տեղ գտնել հետևյալ խմբերը.

- *ուրախների և հնարամիտների ակումբ,*
- *երաժիշտներ, նկարիչներ, մարզիկներ,*
- *ուսանողներ, բանվորներ, հոգևորականներ,*
- *վարորդներ, շինարարներ, դարբիններ,*
- *զբոսաշրջիկներ, ճամբարականներ* և այլն:

Կարող են լինել նաև խմբերի այլ բաժանումներ:

Քննարկման ընթացքում ասվածին ընդհանուր անդրադարձ կատարելու դեպքում կարելի է արձանագրել, որ մարդկանց խմբերը կարող են առանձնացվել ըստ տարբեր չափանիշների՝

ա) սեռի և տարիքի,

բ) բնակության վայրի,

գ) զբաղմունքի, մասնագիտության,

դ) ազգային պատկանելության,

ե) կրոնական պատկանելության,

զ) նախասիրության և այլն:

Բերված թվարկումները ցույց են տալիս, որ մարդն իր ողջ կյանքի և գործունեության ընթացքում այս կամ այն *հասարակական (սոցիալական) խմբի* անդամ է:

Իսկ ինչո՞վ է պայմանավորված հասարակական խմբերի գոյությունը, ինչպե՞ս են մարդիկ հայտնվում այս կամ այն խմբում:

Սոցիալական շերտեր

Սոցիալական խմբեր են համարվում մարդկանց շերտերը, խավերը, դասակարգերը: Հասարակությունը, հասարակական հարաբերություններն ուսումնասիրող գիտություններից մեկի ներկայացուցիչները՝ *սոցիոլոգները*, կարծում են, որ հասարակական խմբերի բազմազանությունը նախ և առաջ հետևանք է մարդկային գործունեության հիմնական տեսակների բազմազանության (տնտեսական, քաղաքական, բնապահպանական և այլն): Օրինակ՝ տնտեսական գործունեությունը հանգեցրել է հարուստների, միջին խավի և աղքատների գոյությանը, իսկ քաղաքական գործունեությունը՝ առաջնորդների և հետևորդների, ղեկավարների և ենթակաների առաջացմանը: Մտավոր գործունեության առանձնանալու արդյունքում ի հայտ են եկել մտավոր (մանկավարժ, բժիշկ, նկարիչ, ծրագրավորող և այլն) և ֆիզիկական (շինարար, հողագործ, արհեստավոր և այլն) աշխատանքով զբաղված մարդկանց խմբերը:

Հասարակական տարբեր խմբերի գոյությունը պայմանավորված է նաև մարդկանց ապրելակերպի, մշակույթի, հասարակական նորմերի և արժեքների բազմազանությամբ:

Յուրաքանչյուր մարդ ցանկության դեպքում կարող է լինել այն խմբում, որտեղ իրեն

զգում է անկաշկանդ, գնահատված և պաշտպանված, որտեղ կա ընդհանուր նպատակ և այլն:

Որ խմբին էլ որ մարդ պատկանելիս լինի, պետք է ունենա սեփական արարքների հանդեպ պատասխանատվության զգացում:

Գործնական աշխատանք

Ենթադրենք՝ Երկիր մոլորակից ոչ հեռու նոր մոլորակ է հայտնաբերվել, որը շատ նման է Երկրին: Սակայն կա մի տարբերություն. այն բնակեցված չէ: Պատկերացնենք, թե մենք ենք լինելու մոլորակի առաջին բնակիչները: Նոր բնակավայր ստեղծելը հեշտ բան չէ, և վերաբնակիչներին օգնելու նպատակով արշավախմբի կազմում ընդգրկվելու են ***խորհրդատու մասնագետներ:*** Խորհրդատուների ընտրությունը կատարվելու է տրված ցանկից:

Պետք է ընտրել ութ մասնագետի: Կատարե՛ք ընտրություն և կազմե՛ք խորհրդատուների խումբը: Պարզաբանե՛ք ընտրություն կատարելու ձեր սկզբունքը:

Մասնագետների ցանկ

Ուսուցչուհի, 45 տարեկան	*Մարզիկ, աշխարհի չեմպիոն, 26 տարեկան*
Գյուղատնտես, 41 տարեկան	*Երաժիշտ, 24 տարեկան*
Ատաղձագործ, 56 տարեկան	*Շինարար, 49 տարեկան*
Կենսաբան, 27 տարեկան	*Երկրաբան, 32 տարեկան*
Խոհարար, 34 տարեկան	*Փաստաբան, 42 տարեկան*
Բժիշկ, 37 տարեկան	*Բնապահպան, 29 տարեկան*
Ճարտարագետ, 32 տարեկան	*Զինվորական, 38 տարեկան*
	Քաղաքագետ, 55 տարեկան
	Ծրագրավորող, 22 տարեկան

Հոգևորական, 51 տարեկան	*Պատգամավոր, 49 տարեկան*

Համայնք

Համայնք հասկացությունը կարող է ունենալ տարբեր իմաստներ: Ստորև բերվող օրինակներում ի՞նչ իմաստով է այն գործածված:

• Առաջիկայում այստեղ *համայնքի* ղեկավարի ընտրություն կլինի:

• Դպրոցի ծնողական *համայնքը* համաձայն չէ այդ առաջարկին:

• Եվրոպական *համայնքն* իր աջակցությունն է հայտնում մեր երկրում ժողովրդավարական ընտրական համակարգի հաստատման ուղղությամբ արվող քայլերին:

Հասկանալի է, որ առաջին դեպքում *համայնք* ասելով՝ նկատի է առնվում տեղական ինքնակառավարման մարմին, երկրորդ դեպքում՝ տվյալ դպրոցում սովորողների ծնողների խումբը, երրորդ դեպքում՝ Եվրոպական միության մեջ մտնող երկրների խումբը:

Համայնք ասելով՝ առաջին հերթին հասկանում ենք տարածքային հիմունքով միավորված, այսինքն՝ միևնույն գյուղում, քաղաքում, թաղամասում ապրող մարդկանց խումբը: Դա, որպես կանոն, համընկնում է վերևում նշված առաջին՝ վարչատարածքային միավորի իմաստին, սակայն որոշ դեպքերում կարող է նաև չհամընկնել, որովհետև վարչական առումով համայնքը կարող է ընդգրկել մեկից ավելի բնակավայր: Ցանկացած դեպքում կարևորը ոչ թե բնակավայրի չափերն են կամ այնտեղ ապրող մարդկանց թվաքանակը, այլ այն, որ այդ մարդիկ իրենց համարեն մեկ *միասնական հանրության՝ համայնքի անդամներ:* Միայն այդպիսի գիտակցությամբ միավորված համայնքը տեղական և ընդհանուր հասարակական ու պետական ջանքերի զուգակցությամբ կարող է առաջադրել և լուծել իր համար

կենսականորեն կարևոր խնդիրներ:

Քննարկում ▶ *Ընթերցելով հայազգի մեծանուն գրող Վիլյամ Սարոյանի «Ֆրեզնոն» ստեղծագործությունից ստորև բերված հատվածը՝ վերհիշե՛ք որևէ հիմնախնդիր, որը լուծվել է ձեր համայնքի ընդհանուր ջանքերով:*

Դաս 5. Արդյունավետ հաղորդակցում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ են մարդիկ ապրում փոքր և մեծ խմբերով:

2. Ի՞նչ է տալիս մարդը խմբին, խումբը՝ մարդուն:

3. Ինչպե՞ս են մարդիկ հաղորդակցվում:

4.Մարդկանց ապրելակերպի, մշակույթի, հասարակական նորմերի և արժեքների բազմազանությունն ի՞նչ ազդեցություն է ունենում հասարակական խմբերի ձևավորման վրա:

Գործնական աշխատանք

Ինքնավերլուծություն, զրույցներ, հարցազրույցներ

- Իրական օրինակներով ներկայացնել մարդու և հասարակության փոխներգործությունը։
- Ուսումնասիրել ժողովրդական ավանդույթներ և ծեսեր։
- Նկարել սոցիալական տարբեր խմբեր։

Թեմա 3. Մարդ-մտածողություն, սոցիալական-էմոցիոնալ հմտություններ

Թեմայի նպատակը

Սովորողները կհասկանան մտածողության, սոցիալական հմտությունների, հույզերի կարևորությունը մարդու կյանքում և որոշակի օրինակների ու իրավիճակների վերլուծության միջոցով կզարգացնեն ինքնաճանաչողությունը և իրավիճակին համարժեք արձագանքելու հմտությունները։

Դաս 6.Մտածողություն։ Մտածողության կանոններ։

Դաս 7. Հույզեր։

Դաս 8. Մտածողության, հույզերի և վարքագծի կապը։

Դաս 9. Նախապաշարմունքներ, կարծրատիպեր, ազդեցություններ։

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս են մտածողությունը, սոցիալական հմտությունները և հույզերը ձևավորում մարդուն։
2. Ինչպե՞ս են հույզերը, մտածողությունը և վարքագիծը կապված իրար հետ։ Ինչո՞ւ է այդ երեքի ներդաշնակությունը կարևոր։
3. Արդյոք հնարավո՞ր է խուսափել նախապաշարմունքներից, կարծրատիպերից և անցանկալի ազդեցություններից։
4. Ինչպե՞ս դիմակայել դրանց։
5. Ինչպե՞ս է մտածողությունն ազդում մեր կայացրած որոշումների վրա։
6. Ինչպե՞ս ենք արտահայտում հաճելի և տհաճ զգացողությունները։

Գործնական աշխատանք

- Համառոտ էսսեի պատրաստում։
- Բովանդակությանն առնչվող պատկերների քննարկում, հարց ու պատասխան։
- Ունկնդրել երաժշտությունը և նեկայացնել առաջացնող հույզերը։

Թեմա 4. Մարդ-բարոյականություն

Թեմայի նպատակը

Սովորողները կհիմնավորեն բարոյական նորմերի անհրաժեշտությունը, կբացատրեն բարոյագիտության առանցքային հասկացությունները։ Կկարողանան դատողություններ անել որոշակի իրավիճակներ վերլուծելու միջոցով։

Դաս 10. Բարոյական նորմերի նշանակությունը։ Բարոյականության ոսկե կանոնը։

Դաս 11. Ազնվություն և սուտ։ Բարի և չար։ Պարտք և խիղճ։

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչու է բարոյականությունը կարևոր։ Ի՞նչ կլինի, եթե չլինեն բարոյական նորմեր։
2. Որո՞նք են բարոյականության հիմնական հասկացությունները։ Ինչպե՞ս են դրանք դրսևորվում։
3. Ինչպե՞ս է մարդու մտածողությունն ազդում բարոյական հարցերի մասին որոշումներ կայացնելու վրա։
4. Ինչպե՞ս է հասարակությունն ազդում բարոյական նորմերի վրա։

Գործնական աշխատանք

Անցկացնել քննարկումներ, օրինակ՝ ի՞նչ կլիներ, եթե չլինեին բարոյական նորմերը։

Օգտագործված գրականության ցանկ